

187

101

— 7

— 88

8

V-55

2014

2011


101/5

1

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՒԱՆ ԴՈՒԹԻՒՆ).

፳ ሁ ሶ ጥ ሆ ሁ ን ቴ ያ ቡ በ ኮ ሀ ቴ ሶ ድ ን ኮ ያ

Մ. ԱԼԵԱՆԱԿԻ.



ՀՈՐ ՆԱԽԻԶԵՒԱՆ.

ՏՊԱՐԱՆ Ա., ԶԱՄԻՆԵԱՆ ԵՒ Վ. ՔԻՐԼԵԱՆ

1896.

8
15-55

ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ).

Թ Ա Ր Դ Մ Ա Ն Ե Յ Ռ Ո Ւ Ս Ե Ր Է Ն Ի Յ

Մ. ԱԼԵԱՆԱԿԻ.



1593

1593

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆ.

ՏՊԱՐԱՆ Ա. ՋԱՄԻՆԵԱՆ ՆԻ Վ. ԲԻՐԼԵԱՆ.

1896.

Սրբազան տառադրուհի
 Գրում է՝ Բնագրում
 որ է՝ անունը Զորքում
 ինչպիսիք ըստ օրենքի
 Բնագրում Զին
 Սն ի. Զին

Արքայադոկտոր Արքայադոկտոր
 Ս. Ս. Ս. Ս.

Доз. пен. 19 Сентября 1895 г., С.-Петербургъ.

1892 Սրբազան տառադրուհի
 Բնագրում Զորքում
 73164-ան



225-849

Հանդիմանք ինչպիսիք
 ինչպիսիք Զորքում

ԱՆՏԱՀԱՐԾՈՒԹԻՒՆ

(Արևելահայկական առևտրական):



ին ժամանակներն Ասիական հարուստ
 Մոսուլ քաղաքում ապրում էր մի ծե-
 րունի՝ Մահմէդ-Ալի անունով, որին
 ամէնքը շատ մեծարում էին: Շատերը ճանաչում
 եւ պատվում էին նրան իւր անձիւ հարստու-
 թիւնների՝ ինչպէս եւ շատ երկրների հետ ու-
 նեցած ընդարձակ առեւտուրի համար. ոմանք
 էլ փառաւորում էին նրան հիւրասիրութեան
 եւ օտարասիրութեան համար. նրա հարուստ
 պալատը դիւրամատչելի էր ամեն մի անցորդի,
 ով որ էլ լինէր. Մահմէդ-Ալիի մօտ միակերպ
 հիւրասիրութեամբ ընդունում էին թէ՛ հարըս-
 տին եւ թէ՛ աղքատին, թէ՛ օտարականին եւ
 թէ՛ հայրենակցին: Հիւրին տանում էին շքեղ
 զարդարուած պալատը եւ ամեն կերպ ծա-
 ռայում էին նրան. ամեն բան պատրաստ էր
 հիւրի առաջ՝ բաղնիք, կերակուր եւ անկողին:
 Ոմանք էլ տիրում էին Մահմէդ-Ալիին իւր պայ-
 ծառ խելքի եւ անկեղծ բնաւորութեան հա-
 մար: Շատ անգամ խալիֆան Մահմէդ-Ալիին
 խորհրդի էր հրաւիրում, եւ խոհեմ ծերունու
 խորհուրդները միշտ խաղաղասիրական էին
 եւ մղու էլ խելացի: Մոսուլի բնակիչները
 այնքան էին յարգում նրա խօսքը, որ ծանր

դէպքերում գնում էին նրա մօտ իրանց կռիւներն ու դատերը նրա վճռին յանձնելու: Կռուողներին Մահմէդ-Ալին աշխատում էր հաշտեցնել, իսկ վիրաւորուածներին եռանդով պաշտպանում, եւ՝ նրա վճիռը միշտ արդար էր համարվում: Ծերութեան հասակում Մահմէդ-Ալին ունեցաւ շատ անկեղծ բարեկամներ նրանցից, որոնք շատ անգամ իւր խելացի խորհուրդներից եւ բարի նպատակներից օգուտ էին քաղել:

Բայց ծերունին համեստ էր, եւ ամենեւին չէր հպարտանում մարդկանց առաջ, ոչ իւր առաքինութիւնով, ոչ էլ բարձր հոշակով, եւ համարում էր, թէ ամեն բան ինչ որ ինքն ունի, տրուած է նրան Աստուծոյ ողորմութեամբ: Մահմէդ-Ալիի ամենամեծ ուրախութիւնն եւ գլխաւոր նեցուկը իւր երկու որդիքն էին: Երբ նոքա մեծացան՝ Մահմէդ-Ալին արդէն հասակն առած էր, ալեգարդ գլխով, իսկ նրանց մայրը վաղուց մեռած էր:

Անդրանիկ որդին Զաֆարը բարձրահասակ ու թիկնաւէտ երիտասարդ էր, արագ եւ համարձակ հայեացքով. մարմնով առոյգ էր եւ առողջ, իսկ հոգով՝ եռանդուն եւ անհանգիստ: Մանկութիւնից երազում էր նա դիւցազնական գործեր, փառք. ձգտում էր մեծամեծ արարքների՝ եւ ամեն բանի մէջ առաջինը լինել իւր ընկերներից. թէ՛ ուսման եւ թէ՛ զուարճութեան մէջ: Կրտսեր որդին՝ Նուրեդինը երգիչ էր՝ կակուղ եւ մտախոհ ընաւորութիւնով: Նրա սրտի

քնքշութիւնն ու բարութիւնը յայտնի էին Մոսուլ քաղաքի բոլոր աղքատներին եւ երեխաներին: Նրա գործերը համեստ էին եւ պարկեշտ: Մեծ եղբայրը սիրում էր զէնք, շքեղութիւն, ուրախութիւն, վտանգ. իսկ Նուրեդինը ախորժում էր աստղալից երկինք, խաղաղ գետ լուսնեակ գիշերին, պարտիզում թռչունների երգը արշալուսին: Ամբողջ ժամեր նա անց էր կացնում գիշերները հայրենի տան հարթ կրտուրի վերայ մտածմունքների մէջ ընկղմուած եւ կամ փառաբանելով Աստուծուն եւ աշխարհի հրաշքները:

Մարդիկ ասում էին այդ երկու եղբայրների համար, թէ մեծը նման է պայծառ այրիչ կէսօրուան, իսկ կրտսերը՝ յիշեցնում է հանգիստ պայծառ երեկոյ, եւ դժուար էր որոշել. թէ եղբայրներից ո՛րը աւելի լաւ էր: Ծերունին հաւասարապէս սիրում էր երկու որդւոցը եւ ուրախութեամբ դիտում էր նրանց օր աւուր անելն ու զարգանալը:

«Ես ուզում եմ մեծ լինել», շատ անգամ ասում էր Զաֆարը՝ եւ նրա դէմքն արտայայտում էր ոյժ եւ անվեցեղութեան գիտակցութիւն. իսկ անքերը փայլում էին, կարծես թէ տեսնում էին մի բարձր հրասուրիչ բան:

— «Այդ հեշտ չէ, որդիս». մեղմ պատասխանում էր հայրը՝ շոյելով նրա գանգուր գլուխը:

«Դժուար է հասկանալ եւ գտնել իսկական մեծութիւնը»:

«Ես ուզում եմ բարի լինել», դեռ մանկու-

Թեան ժամանակ ասում էր Նուրեդինը, մտախոյ նայելով փողոց:

Այնտեղ շոգ օրերը տօթին եւ փոշիին՝ գրէխաբաց գերիները ծանրաբայլ գնում էին բեռնաբարձ էշերի եւ ուղտերի մօտից, անցնում էին ծառաները՝ շտապելով իրանց տէրերի յանձնարարութիւնները կատարելու, աղքատ ընտանիքների կանայք, չատրաներով ծածկուած, շտապով վազում էին հոգալու իրանց երեխաների եւ ամուսինների սնունդը, ահա եւ մի աղքատ տղայ՝ պատառուտած ու կեղտոտ, անցնում էր փողոցից՝ փնտռելով մի սուկեր, որ կարողանայ պատսպարուել կիզիչ արեւից: Եւ Նուրեդինը փողոց նայելով, ակամայ մտածում էր, թէ ինչպէս ինքը իրան լաւ եւ զով է զգում իւր հօր քարաշէն պալատում եւ ինչպէս ամեն բան առատ է այստեղ, իսկ այնտեղ փողոցում՝ մարդիկ առանց հանգստութեան հոգս են անում սնունդի համար եւ այդ պատառուած շորերով երեխայի նման չգիտեն ո՛ւր ապաստանեն շոքից ու ծարաւից: Եւ Նուրեդինի արտասուքով լի աչքերը դառնում էին հօրը, որ հասկանում էր նրան, լուռ քաղցրութեամբ շոյում էր նրա գլուխը եւ ուղարկում էր ծառաներին աղքատ երեխայի յետեւից:

Ծառան հրաւիրում էր նրան հանգստանալ Նուրեդինի հօր սիրաշատ յարկի տակ: Աղքատին տալիս էին ուտելիք եւ շոր, սփոփում էին քաղցր խօսքերով եւ նա այնտեղից դուրս էր գալիս ուրախ զուարթ եւ Աստուծոյ փառք տալով:

Յետոյ երբ Նուրեդինը մեծացաւ եւ կարող էր ազատ ընտրել իր սրտի ուզած զբաղմունքը, նա շատ անգամ վաղ առաւել տանից դուրս էր գալիս առանց տանիցիներին մի բան ասելու: Այդ գիտէին միայն աղքատները, անտունները եւ հիւանդները. նա օգնում էր նրանց ինչպէս եւ ինչով որ կարող էր: Նրա հօր առատածեռնութիւնը թոյլ էր տալիս նրան թշուառին ազատել աղքատութիւնից, բայց ամեն բանից աւելի սիրում էր ցաւագարներին, ծերերին եւ լքեալներին հոգալ, ծառայելով եւ օգնելով նրանց դեղերով, եւ չէր զգուում կեղտոտ հիւանդներից եւ չէր վախենում վարակուելուց: Նրա սրտագին հոգացողութիւնը եւ բարի խօսքը միշտ մխիթարութիւն էին վշտացածների համար եւ կակղացնում էին Աստուծոյ եւ մարդկանց դէմ չարացածների սրտերը:

Նատ անգամ քաղաքացիները տեսնում էին թէ ինչպէս երեկոյին վերադառնում էր սուլն, բերելով հետը մի ուրեւիցէ աղքատ կամ հիւանդ, իսկ նրա շուրջը եւ առաջը ուրախ ձայներով վազում էին երեխաներ: Բերելով նրանց տուն, Նուրեդինը հոգացողութեամբ բաւականութիւն էր տալիս չքաւորի պէտքերին, յետոյ երեխաների բազմութեամբ շրջապատուած նստում էր գետնի վրայ մի առանձնացած տեղ, եւ պատմում էր նրանց հրաշալի հեքիաթներ եւ երգում նրանց հետ երգեր ու աղօթքներ: Այդ ամենը նա այնքան լուռ, համեստ եւ աննկատ կերպով էր անում, որ շատ քիչ մարդիկ գի-

տէին նրա բոլոր գործերը. իսկ հարազատ եղբայրը՝ Ջաֆարը շատ անգամ զարմանում էր, թէ ինչ բաւականութիւն կարող է գտնել իւր կրթութեւր եղբայրը այդ տեսակ զբաղմունքների մէջ:

Այդպէս մեծանում էին եղբայրները եւ չը նայելով բնաւորութեան եւ ցանկութիւնների տարբերութեան, նրանք շատ սիրում էին միմեանց եւ սերտ կապուած էին միմեանց հետ:

Ա. - Պ. Բ. Գ. Զ.

Ջաֆարը քսան տարեկան դարձաւ: Նա երազում էր, թէ ինչ փառաւոր եւ մեծ գործունէութիւն կընտրէ: Նա կըթուած էր, ունէր շատ տաղանդներ, զարմանալի ճարպիկութիւն եւ ոյժ. ամբողջ Մոսուլում նրանից լաւ ձիավար եւ նետաձիգ չկար:

«Նմ փառաւոր դիւցազնական գործ», շարունակում էր սրտեռանդ պատանին:

Եւ ահա հանգամանքը օգնեց նրան:

Նոցա երկրի խալիֆան պատերազմ սկսեց դրացի տէրութեան դէմ: Երկու կողմն էլ խրատութեամբ պատերազմում էին: Խալիֆայի ամենալաւ զօրավարները սպանուած էին եւ նրա զօրքերը սկսեցին կոտորուել: Ջաֆարը վճռեց, թէ փառք վաստակելու ժամանակը հասել է եւ խնդրեց հօրը իրան պատերազմ ուղարկել:

«Ես մեծ եւ հռչակուած կը վերադառնամ, հայրիկ», ասում էր Ջաֆարը մնաս բարեւաւ ասելիս:

Մերունին լուռ եւ տխուր ճանապարհ ձգեց որդուն:

Անցաւ մի տարի, երկու, երեք... Պատերազմը վերջացաւ: Այդ ժամանակ Ջաֆարը շատ հռչակուեցաւ իր համարձակ եւ խելացի սրբաբարձութիւններով եւ վերջապէս զօրավար նշանակուեցաւ: Նա բոլորովին կոտորեց թշնամու զօրքերը, տիրեց մի քանի քաղաքների եւ առաւ շատ գիրիներ: Նրա աշխարհակալութեան շնորհիւ խալիֆայի տէրութեան սահմաններն ընդարձակուեցան եւ նուաճուած քաղաքները ստիպուած էին նրան տուրք տալ:

Մոսուլ քաղաքի համար հասաւ մեծ տօն: պատրաստուում էր սակաւագիւտ եւ շքեղ հանդէս: Մեծ եւ փառաւոր զօրավարը արշաւանքից վերադառնալով՝ զօրքի եւ գերիների հետ պէտք է մեծարանքով անցնէր քաղաքի միջից: Խուռն բազմութիւն հաւաքուած էր քաղաքի դռների մօտ: Ճանապարհը, որով պէտք է անցնէր յաղթող Ջաֆարը՝ քաղաքի փառքը, երկրի պատիւը, խալիֆայի սիրականը՝ գորգերով եւ ծաղիկներով ծածկուած էր: Մերերն ու երիտասարդները, կանայք եւ երեխայք, ամենքը անհամբերութեամբ եւ ուրախութեամբ սպասում էին, եւ լարուած հեռուն նայում:

Ահա երեւաց դանդաղաքայլ գնացքը: Ամենից առաջ գեղեցիկ սպիտակ ձի հեծած գալիս էր Ջաֆարը: Ամբոխը աշկոծուեց, հազարաւոր հետաքրքիրների աչքեր դարձան նրա վրայ եւ սքանչացման ձայներով ողջունում

եւ ուղեկցում էին նրան բոլոր փողոցներում: Յաղմուղի յետեւից գալիս էին զինուորներով շրջապատուած շղթայակապ գերիներ:

Ծերունի Մահմէդ-Ալին դուրս չեկաւ քաղաքի դռների մօտ՝ ընդունելու իւր որդուն, այլ սպասում էր նրան իւր տան շէմքի վրայ, երկրորդ որդու ուսին յեցած. նուրեդինը արտայայտում էր անհամբեր ուրախութիւն, իսկ ծերունին հանգիստ էր եւ վսեմ:

Մօտենալով հօր տան՝ Ջաֆարը կանգնեցրեց ձին, վայր ցատքեց եւ յուզուած ուրախ երեսով մօտեցաւ ծերունի հօրը: Ամեն բան լուռութեան մէջ էր: Հերոսը մինչեւ գետին խոնարհեցաւ հօր առաջ եւ երբ ծերունին բարձրացրեց եւ գրկեց նորան, Ջաֆարը մեղմ հարցրեց.

«Հայր, արդեօք մեծ մարդ եմ»:

«Ոչ որդիս», մեղմ՝ հազիւ լսելի ձայնով պատասխանեց ծերունին:

Ոչ ոք չը լսեց այդ բառերը, բայց տեսան ամենքը թէ ինչպէս մուայլուեց Ջաֆարի երեսը, արտասուքի կաթիլներ երեւեցան այն մարդու աչքերում, որի հայեացքից շփոթուած ու խառնիխուռն փախչում էին թշնամիները. ամենքը տեսան, թէ ինչպէս գլուխը կախած մօտեցաւ ձիուն եւ հեծնելով տրտում տխուր շարունակեց ճանապարհը:

Նրան այլ եւս չէին ուրախացնում ո՛չ ամբոխի ցնծութեան ձայները, ո՛չ այն ծաղիկներն, որոնք փռուած էին փողոցներում եւ որ ամեն կողմից թափվում էին նրա ոտների տակ: Նու-

տով լուր տարածուեցաւ, թէ մեծ գորավարը՝ տէրութեան նեցուկը անհետացել է:

Գ.

Մի քանի տարուց յետոյ արեւելքի մեծ տէրութիւններից մէկում երեւեցաւ մի երիտասարդ գիտնական, որ շուտով հռչակուեցաւ: Ամեն տեղ խօսում էին, թէ ինչ զարմանալի կերպով բժշկել է նա թագաւորին ծանր հիւանդութիւնից: Պատմում էին, թէ թագաւորը առողջանալով առաջարկել է նրան իբրեւ վարձ ընդունել իւր սրտի ցանկացածը: Երիտասարդը խնդրել է աւագոտ անապատի մի մասը եւ հնարելով ոռոգման եւ պարարտացնելու մի նոր եղանակ՝ կարճ միջոցում դարձրել անապատը ծաղկալից պարտեզ եւ թողել որ տէրութիւնը նրանից օգտուի: Ամբողջ նահանգներ, որ դատարկ էին մինչեւ այդ ժամանակ, այժմ կարող էին բնակավայր լինել: Երկրի հարստութիւնը դրանից աւելացաւ եւ բոլոր ժողովուրդը փառաբանում էր գիտնական Ջաֆարին՝ կարծելով թէ նա ըմբռնել է բնութեան բոլոր գաղտնիքները: Բայց ոչ ոք չը գիտէր՝ թէ ո՞րտեղից է նա, եւ ամենքը համարում էին նրան մի երկնքից իջած հրեշտակ:

Մի խաղաղ ամառուայ գիշեր համեստ հագնուած մի երիտասարդ մտաւ Մոսուլ քաղաքը եւ Մահմէդ-Ալիի պալատին հասնելով բախեց դուռը:

Երբ ծառան դուռը բացեց, նա ծածկելով

երեսը վերարկուով, խնդրեց տանել իրան ասն-
տիրոջ մօտ:

Ծառան սկզբից չէր յօժարում ներս թողնել
խորհրդաւոր հիւրին տանտիրոջ հանգստա-
նալը պատճառ բերելով, բայց վերջապէս գի-
ջաւ նրա թախանձանքին եւ տարաւ իւր տիրոջ
ննջարանը: Ծերունի Մահմէդ-Ալին թեկն ընկած
բազմոցի վրայ սուրճ էր խմում: Անծանօթը հա-
մեստ կերպով կանգնեց դրան մօտ եւ տանտի-
րոջը տուաւ սովորական ողջոյնը: Նրա ձայնը
լսելիս ծերունին սարսեց.

«Ջաֆար դո՞ւ ես»:

— «Ես եմ», պատասխանեց Ջաֆարը:

«Ո՞ր էիր մինչեւ այժմ», բացականչեց հայրը:

— «Ես փառք էի փնտռում եւ ահա գտայ:

Ասա. լսե՛լ ես արդեօք այն հուշակաւոր բժշկի
մասին, որ առողջացրել է թագաւորին: Լսե՛լ
ես այն մեծ գիտնականի մասին, որ աւա-
զոտ անապատը դարձրել է պտղաբեր երկիր:
Այդ ես եմ»:

«Այժմ երկրի աւերիչ չեմ, կործանիչ սրով
չեմ եկել քո մօտ, այլ խաղաղութեան ճիւղով:

Բոլոր ժողովուրդը՝ թէ մերը եւ թէ օտարը,
փառաբանում է իմ անունը: Ասա, այժմ ընդու-
նօ՞ւմ ես, որ ես մեծ մարդ եմ»:

Ծերունին տխրութեամբ նայեց նրան եւ
մեղմ բայց հաստատ ձայնով ասաց. «ո՛չ»:

«Էլի՞ ոչ», բացականչեց որդին, զարմացած
հօր պատասխանի վրայ. ծանր հառաչեց եւ խո-
նարհաբար բարեւելով հօրը՝ դուրս եկաւ եւ
նորից հեռացաւ հայրենի քաղաքից:

19.23.24.

Այսինքն

Դ. 72

Անցան այլ ես քանի մի տարիներ: Արեւելքի
բոլոր քաղաքներում հիացմունքով կարգացվում
էին մի նոր մեծահուշակ բանաստեղծի ոտանա-
ւորները: Առաջուայ գրողների անունները նսե-
մացան նրա առաջ, ինչպէս աստղերը արեւի
առաջ: Նրա բանաստեղծութիւնները ամեն տեղ
կարգացվում էին եւ ամեն մարդ՝ թէ ծեր եւ
թէ ջահել, Ջաֆարին դրուատում էին:

Նրա համբաւը հասաւ եւ իւր հայրենի քա-
ղաքը:

Մոտուլ քաղաքի խալիֆան, լսելով նրա մա-
սին, հրամայեց գտնել նրան եւ առաջարկել պա-
լատական բանաստեղծ լինել: Բայց Ջաֆարը
ինքն անյայտ էր եւ բացի անունից ոչ ոք ոչինչ
չը գիտէր նրա մասին:

Մի առաւօտ շատ վաղ Մահմէդ-Ալիի պալա-
տին մօտեցաւ փոշոտ, յոգնած մի անցաւոր՝
ծեռքը գաւազան: Չը նայելով ցնցոտիներին եւ
ուժասպառ դէմքին՝ ծառաները ճանաչեցին Ջա-
ֆարին: Ուրախութեան աղաղակներ լսուեցան
ամբողջ տան մէջ եւ նրան տարին ներքին սե-
նեակները: Ջաֆարը գտաւ հօրը առաւօտեան
աղօթքի կանգնած:

Տարիները ընկճել էին ծերունուն, կնճիւ-
ները ծածկել էին նրա երեսը, բայց նոյն պայ-
ծառ հայեացքով, լի խելքով եւ բարութիւնով,
նոյն սիրով դարձաւ նա որդուն աղօթքը վեր-
ջացնելուց յետոյ: Ծերունին ուզում էր գրկել

Նրան, բայց որդին ծնկի ընկնելով նրա առաջ՝
յուզուած ձայնով հարցրեց.

«Ահա ես նորից եկայ քեզ մօտ, հայր, քո
դատավճիռը լսելու ցանկութեամբ վառուած:
Իմ ոտանաւորներն ամենին, թէ հարուստին եւ
թէ աղքատին, տալիս են հոգեկան մխիթարու-
թիւն եւ զուարճութիւն: Իմ անունը յաւիտեան
հռչակուած է, իմ գրուածքները չեն մեռնիլ իմ
մահից յետոյ եւ այնպէս կը կարդացուին, ինչ-
պէս եւ այժմ: Ասա, ընդունու՞մ ես իմ մեծու-
թիւնը»:

Ծերունին բարձրացնելով նրան գետնից եւ
պինդ գրկելով մեղմ շշուշաց.

«Ես ափսոսում եմ, որդիս, բայց դու դեռ չես
հասկանում թէ ո՛ւր է իսկական մեծութիւնը»:

— «Բայց ես կը գտնեմ նրան», բացականչեց
Ջաֆարը:

«Նրա յետեւից ընկնելով, չես գտնիլ նրան»,
նկատեց հայրը:

Գլուխը կախած դուրս եկաւ Ջաֆարը եւ
նորից անհեռացաւ հայրենի քաղաքից:



Անցաւ հինգ տարի: Մի լուսնեակ գիշեր ծե-
րունի Մահմէդ-Ալին բարձրացաւ իւր տան կը-
տուրը թարմ օդ ծծելու: Նա մտախոհ նայում էր
պարզ աստղալից երկնքին: Գլուխը խոնարհելիս
յանկարծ նկատեց վարը մի մարդու ստուեր,
որ թափառում էր եւ շրջում պատերի տակ,
եւ կարծես թէ չէր համարձակվում դուռը բա-
խել: Ծերունին սկսեց նայել եւ տեսաւ պատա-
ռոտած զգեստով մի մարդ: Նրա բաց գլուխը
եւ բոքիկ ոտները դիտելով, Մահմէդ-Ալին այն-
պէս համարեց, թէ օա անապատական դեր-
վիշ է: Այն ժամանակ ծերունին կանչեց.

«Համարձակ խփիր, օտարական. իմ դուռը
գիշեր եւ ցերեկ միշտ բաց է ճանապարհորդ-
ների առաջ»:

Գերվիշը լսելով այդ ձայնը՝ դողաց եւ հե-
ռացաւ պատից. աչքերը վեր բարձրացրեց, որ
խօսողին տեսնէ: Լուսինը լուսաւորեց նրա նի-
հարած եւ տանջուած երեսը: Ծերունին իւր տը-
կար աչքերով ճանաչեց որդուն, չը նայելով նրա
ծերացած ու հալումաշ դէմքին:

«Ջաֆար, դո՞ւ ես»:

— «Հայր», լուեցաւ վարից եւ հեկեկանքը
ընդհատեց Ջաֆարի ձայնը:

«Տես, հայրիկ, աշխարհիս ամեն բանից հրա-
ժարուեցայ: Հարստութիւն, փառք, պատիւ,
ամեն բան ունայնութիւն է. ես այդ հասկացայ.
գնացի անապատ եւ միայն Աստուծուն տա-

լիս եմ իմ բոլոր մտածմունքն ու կեանքս: Խիստ պատու, անվերջ աղօթքով եւ ծանր զրկանքներով ծառայում եմ Աստուծոյ եւ միայն նրանից եմ սպասում փառքի պսակը: Ես հրաժարուեցայ աշխարհի փառքից, հասկանալով որքան չնչին էի եւ փոքր՝ իմ հպարտութիւնովս. այժմ ինձ սուրբ են կոչում եւ ամեն կողմերից ինձ մօտ աշակերտներ են գալիս: Բայց այդ բոլորը ինձ չէ բաւականացնում, եւ միայն քո վճռին կը հաւատամ: Ասա՛ հայր, հասկացա՞յ արդեօք քո միտքը. հասա՞յ արդեօք իսկական մեծութեան»:

Ջափարը լռեց՝ սրտատրոփ սպասելով հօր պատասխանին:

Ծերունին լուռ՝ տխուր նայեց վրան եւ վերջապէս ասաց.

«Ի՞նչ պէտք է քեզ իմ հաւանութիւնը, որդիս: Քո խիղճը ինքն ասում է քեզ, որ դու դեռ գտած չես իսկական մեծութեան ճանապարհը, որովհետեւ քո մէջ դեռ ուժեղ է հպարտութեան եւ ինքնասիրութեան ոգին»:

Այդ պատասխանը շանթի նման հարուածեց Ջափարին: Նա յենուեց պատին եւ խուլ հեկեկաց: Ծերունին շտապեց կտուրից իջնել, որդուն ներս բերել. բայց երբ դուրս եկաւ՝ Ջափարը արդէն անհետացել էր:

Ե.

Շուտով սարսափելի աղէտով լցուեցաւ երկիրը: Նորից սկսուեցաւ կատաղի պատերազմ հարեւան խալիֆայի հետ: Նա մի դէպք էր

փնտռում, որ վերադարձնէ կորցրած քաղաքները, որոնք առաջին պատերազմին Ջափարի ձեռքով յափշտակուած էին: Այս անգամ Մոսուլի խալիֆայի զօրքերը չը կարողացան դէմ կենալ թշնամու կատաղի ընդհարումին: Նրանք կոտորուեցան եւ փախան: Շատ քաղաքներ, ի միջի այլոց եւ Մոսուլը, առնուեցան եւ կործանուեցան: Ամենից աւելի վնասուեցաւ Մահմէդ-Ալին, որի հետ թշնամիներն, իբրեւ ատելի Ջափարի հօր հետ, աւելի անգթութեամբ վարուեցան: Չը գտնելով Ջափարին Մոսուլում, նրանք կողոպտեցին ու քանդեցին ամեն բան, ինչ որ կար Մահմէդ-Ալիի մօտ: Չը մնացին այլ եւս դարերով հաւաքուած գանձերը, հրդեհի բոցերի մէջ մոխիր դարձան պալատները. չը մնացին այլ եւս ծառաները, նրանք մասամբ սպանուեցան, մասամբ էլ գերի տարուեցան: Բայց Մահմէդ-Ալին ամեն բանից առաւել ծանր էր տեսնել իւր որդուն՝ հեզ նուրեդինի վիրաւոր գլխով շղթայակապ գերի տարուելը, որ իւր ծերութեան ուրախութիւնն էր եւ նեցուկը: Ոչ միայն հայրը եւ նրա ընտանիքը լալիս էին, այլ բարձրաձայն հեկեկանքով եւ սգով ճանապարհ էին ձգում գերի նուրեդինին Մոսուլի բնակիչներից ահագին բազմութիւն եւ մանաւանդ աղքատները: Նա գնում էր հանգիստ գլխակոր. նրա արտասուալից աչքերը տխուր նայում էին հայրենի քաղաքին եւ սիրելի ազգականներին:

Մահմէդ-Ալին չէր ցաւում ո՛չ իւր կորցրած հարստութեան եւ ոչ էլ ունեցած ձոխ կեանքին

համար, բայց նրա սիրտը կսկծում էր, երբ յիշում էր որդուն եւ կամ տեսնում նրա կնոջ անմխիթար վիշտը:

Վշտից ու արտասուքից ծերունու տեսողութիւնը սկսեց տկարանալ եւ վերջապէս նա բոլորովին կուրացաւ:

Բայց չը նայելով իւր կորուստներին եւ կուրութեան, Մահմէդ-Ալին առաջուայ նման օգտաւէտ էր մարդկանց. նա մոռանում էր իւր անձնական վիշտը հարեւանի տառապանքը տեսելիս: Երբ կորաքամակ, մաշուած հանդերձով իւր որդու մանկամարդ կնոջ հետ անցնում էր շուկայից, ամենքը ուրախութեամբ առաջ էին գալիս եւ ձեռքէ ձեռք քաշելով՝ հրաւիրում էին նրան իրանց մօտ հանգստանալու եւ կազդուրուելու: Շատերն այնտեղ դիմում էին նրա խորհրդին ու մխիթարութեան, եւ նա առաջուան պէս սրտով զգում էր օտարի վիշտն ու թշուառութիւնը: Նա բարեկամ դարձաւ այն բոլոր աղքատներին, որոնք երբեմն շնորհալիս եւ մըխիթարութիւն էին գտնում նուրեղիցի: Մահմէդ-Ալին սիրում էր նրանց հետ ժամանակ անցկացնել, հրճուանքով լսել թէ ինչպէս արտասուք թափելով յիշում էին նրանք նուրեղիին եւ պատմում նրա սիրոյ ու գեթութեան գործերը:

Մահմէդ-Ալիի հարուստ հին բարեկամներից ոմանք առաջարկում էին նրան ոչ թէ միայն պատրաստ բնակարան, այլ եւ փող առեւտուրը վերականգնելու համար. բայց նա անվրդով ու

վճռապէս հրաժարվում էր ամեն բանից, որովհետեւ իւր վիճակի մէջ տեսնում էր Աստուծոյ կամքը եւ ընդունում էր մարդիկներից միայն անհրաժեշտ կարեւոր բաներ՝ սովից չը մեռնելու համար:

Ամենքը զարմանում էին նրա քաջութեան ու համբերութեան վրայ, որով տանում էր իւր ծանր վիճակը: Բայց ոչ ոք չէր տեսնում խելճ ծերունու տրամուծիւնը, երբ գիշերները իւր տան կտուրի վրայ նստած խոր հառաչանքով կրկնում էր՝ «զաւակներս, զաւակներս»:

է.

Միայն մի մարդ լսեց ծերունու ողբն ու կոծը. դա Ջաֆարն էր, որ կրկին անապատից դարձած էր: Նա երկար թափառեց մեծութեան հասցնող ճանապարհներ որոնելով. բայց վերջապէս նրա խելքի ու մարմնի ուժերն սպառուեցան եւ համարելով իրան որ եւ իցէ մեծ գործի անընդունակ, յուսահատ մտածում էր մինչեւ անգամ անձնասպան լինել:

Նա ուղեւորուեց Մոսուլ վերջին անգամ տեսնելու իւր հօրն ու եղբօրը ու նրանց վերջին հրաժեշտը տալու: Յանկարծ ճանապարհին դրացի գիւղերի բնակիչներից իմացաւ Մոսուլ քաղաքին հասած աղէտը եւ իւր հօրն ու եղբօրը դառն վիճակը: Այդ լուրը խոր ազդեց Ջաֆարի սրտին. նա եւս առաւել խոցուեցաւ, երբ իմացաւ, որ ինքն է, փառքի հետամուտ լի-

ներվը, իւր հօր դժբախտութեան գլխաւոր պատճառ դարձած:

Գիշեր էր, երբ Ջաֆարը հայրենի քաղաքն հասաւ: Անչափ տխրական էր տեսնել աւերակներն այնտեղ, ուր երբեմն կանգնած էր իւր հօր պալատը. նա սրտաբեկ սկսեց թափառել դատարկ փողոցներում, երբ մի տնակի կտուրի վրայ մի կուրացած ծերունի տեսաւ: Ծերունին նստել էր՝ վտիտ ձեռներով ծնկները բռնած եւ տխրագին երերում էր: Ջաֆարի ականջին հասան նրա աղիողորմ հառաջանքները «զաւակներս, զաւակներս»:

Ջգացուած Ջաֆարը սկսեց դիտել կոյր ծերունու դէմքը, որ լուսաւորուած էր լուսնի լուսով եւ ձանաչեց իւր դժբախտ հօրը. նա ուզում էր արդէն կոչել նրան, երբ տեսաւ որ մի նորատի կին կտուրն է բարձրանում. դա իւր եղբոր կինն էր: Նա չոքեց ծերունու մօտ եւ գլուխը նրա ուսին խոնարհած՝ ծանր հառաչեց: Ծերունին քնքշութեամբ սկսեց փայփայել նրա գլուխը եւ մեղմ շշնջում էր: Ջաֆարը լսեց միայն վերջին բառերը:

«Ես միշտ յուսով եմ, որ Ջաֆար որդիս նորից կը վերադառնայ մեզ մօտ եւ մենք այն ժամանակ այսպէս մենակ չենք լինիլ»:

Բայց նուրեդինի կինը, Ալֆահիման, յուսահատութեամբ գլուխը շարժելով ասաց.

«Ջաֆարը կարող չէ նուրեդինի տեղը բռնել. նա ինձ օտար է, ես նրան բոլորովին չեմ ձանաչում: Նա ծնած չէ ընտանեկան ու գործու-

նակ կեանքի համար. նա միայն իրան է սիրում եւ իւր փառքը միայն փնտռում»:

— «Այո՛, ճշմարիտ է, Ալֆահիմա, տխրութեամբ ասաց ծերունին, բայց դու չը գիտես, թէ ինչպիսի ազնիւ սիրտ ունի: Եթէ իմանար մեր դժբախտութիւնը, մեզ օգնելու համար անշուշտ ամեն բան կանէր»:

Ալֆահիման դառնութեամբ պատասխանեց.

«Ես երբեք չեմ ներիլ Ջաֆարին, բանի որ ինքն եղաւ մեր դժբախտութեան պատճառ. եթէ Ջաֆարը չը լինէր, նուրեդինը այժմ բանտում չէր նստիլ»:

Ջաֆարը այլ եւս չը կարողացաւ լսել: Ամեն մի բառ սայրասուր դանակ էր, որ մխուռում էր իւր սիրտը:

Հեկեկանքը սղմեց նրա սիրտը, եւ նա գլուխը բռնած սկսաւ փախչել:

Նա կանգ առաւ, երբ արդէն քաղաքից դուրս էր. ընկաւ ծնկների վրայ եւ սկսեց դառնապէս արտասուել, խնդրելով Աստուծուց ընդունել իւր ապաշխարանքը եւ ուսուցանել, թէ ինչ պէտք է անէ:

Նա մտածութեան եւ աղօթքի մէջ ամբողջ գիշերը անցկացրեց եւ առաւօտեան արդէն գիտէր ինչ անելիքը:

Խորին ակնածութեամբ հրաժեշտ տալով իւր հայրենի քաղաքին՝ Ջաֆարը մի ժամ անգամ չը կորցրեց, այլ անյապաղ ձանապարհ ընկաւ գիւղից գիւղ, քաղաքից քաղաք ողորմութիւն խնդրելով, եւ հարցնելով Թշնամի խալիֆայի

մայրաքաղաքի ճանապարհը, որի ձեռքը գերի էր ընկել իւր հարազատ եղբայրը:

Ը.

Վերջապէս հասաւ Թշնամու գլխաւոր քաղաքը: Յիշեց նա այն օրը, երբ ոտք էր կոխել այստեղ յաղթական փառքով իբրեւ զօրավար, իսկ այժմ մտնում էր աղքատի ցնցոտիներով:

Մտնելով երկրի կառավարչի սրահը, նա խնդրեց, որ Թոյլ տան իրան խալիֆային տեսնել, եւ յայտնել նրան իւր խնդիրը, բայց պահպանները նրան վռնդում էին: Սակայն պալատի մօտից չը հեռացաւ, որ կարողանայ խալիֆային զօսանքի՝ գնալիս տեսնել: Այսպէս նա խալիֆայի ճանապարհը պահեց երեք օր: Արեւը այրում էր նրան, կիզիչ փոշին թափվում էր նրա գլխին, բայց նա վճռել էր պալատի դռներից հեռանալ միայն այն ժամանակ, երբ հարկը ստիպէր դրացիներից ողորմութիւն խնդրել: Նրանք տալիս էին հաց ու ջուր:

Վերջապէս չորրորդ օրը Թիկնապահներից իմացաւ, թէ խալիֆան մտադիր է բազմով որսի գնալ: Ահա դռները բացուեցան եւ նրա ուղեկիցները սկսեցին գեղեցիկ ձիերով դուրս գալ: Խալիֆան ինքը հեծած էր ամենագեղեցիկ սպիտակ ձի եւ ձեռին բռնած էր մի լաւ բազէ: Երբ երեւաց պալատի դռան մօտ՝ ամենքը, որոնք կանգնած էին այնտեղ կամ այնտեղից էին անցնում, երկրպագեցին նրան:

Ջափարը խոյնալէս մինչեւ գետին խոնարհեցաւ եւ ծնկաչոք արտասուագին սկսեց գոչել.

«Ասի՛ր ինձ, ողորմած խալիֆայ»:

Բայց խալիֆան տրամադիր չէր աղքատների վրայ մտածել: Նա առանց կանգնելու՝ անցաւ Ջափարի մօտից: Թիկնապահ զինուորիներից մէկը ասաց Ջափարին.

«Սպասիր մինչեւ որսից դառնալը. այն ժամանակ խնդրիր: Եթէ որսը յաջող լինի, խալիֆան գթասիրտ կը լինի. եթէ ոչ՝ յոյսդ կտրիր»:

Ահա դարձեալ կանգնած է Ջափարը եւ սպասում է: Երբ որ հեռուից տեսաւ, որ պալատականները որսից վերադառնում են, նա առաջ եկաւ, եւ երբ խալիֆայի ձին մօտեցաւ, ծնկաչոք սկսեց բարձրաձայն խնդրել, որ խալիֆան լսի իրան:

Խալիֆան կանգնեցրեց ձին եւ հարցրեց.

«Ի՞նչ է ուզում այդ աղքատը»:

— «Ծեծ՝ զօրավար, ասաց Ջափարը, Աստուած գթութեամբ լցնէ քո սիրտը. լսիր նուաստ ստրկիդ խնդիրը, որի կեանքը ձեռքումդ է»:

— «Դու ո՞վ ես», հարցրեց խալիֆան:

— «Ես եկել եմ քո ձեռքով աւերած Մոսուլ քաղաքից: Քո մօտ գերութեան մէջ տանջուում է նուրեդինը, Մահմէդ-Ալիի որդին: Մտածիր, խալիֆայ, ինչի՞դ է հարկաւոր քեզ այդ Թոյլ եւ խաղաղասէր մարդը: Դե՛ռ՝ Թշուառ կոյր հօրը եւ արձակիր նուրեդինին»:

«Ի՞նչպէս համարձակուում ես ինձ անհան-

գըստացնել այդպիսի չնչին բանի համար», դժգոհութեամբ ընդհատեց նրան խալիֆան:

«Գերիններ առանց փրկանքի չեն ազատում: Մերունին թող ուղարկէ քեզանից խելօք դեսպան եւ առատ փրկանք, այն ժամանակ կ'լսեմ նրա խնդիրը»:

Աչքերը խոփռած խալիֆան առաջ գնաց, բայց Ջաֆարը աւելի խղճալի ձայնով կանչեց.

— «Ասիր մինչեւ վերջը, խալիֆայ: Մեր Մահմէդ-Ալիին բոլորովին կողոպտած են քո զինուորները. նա չունի ոչ մի բան որդու փոխանակ տալու: Ես եկել եմ քեզ առաջարկելու իբրեւ փրկանք նրա միւս որդուն՝ Ջաֆարին»:

«Ջաֆարին», բացականչեց խալիֆան, Ջաֆարին, իմ հօր ոխերիմ թշնամուն, որ այնքան վնաս տուեց մեր տէրութեան: Ո՛հ, եթէ նա ընկնէր իմ ձեռքը. խալիֆայի խօսք եմ տալիս, որ ես առանց մտածելու կը փոխեմ նրա հետ իմ գերիններիցս որն եւ լինի»:

— «Աստուած վկայ, որ Ջաֆարը քո գերին կը լինի հէնց այն օրը, երբ նուրեդինը ազատ լինի», ասաց Ջաֆարը:

«Առաջ տուր ինձ նրան ձեռքս, այն ժամանակ կը հաւատամ, ասաց խալիֆան:

Մի քանի վայրկեան Ջաֆարը տատամսեցաւ. յետոյ ուղիղ կանգնեց եւ համարձակ խալիֆայի աչքին նայելով անվեհեր ձայնով ասաց.

«Ա՛ռ ինձ. Ջաֆարը քո մօտ կանգնած է»:

Նրա շուրջը կանգնած ամբոխը ապշեց եւ

շրջապատեց Ջաֆարին, բարձրաձայն յայտնելով իւր հիացմունքը:

Խալիֆան երկար եւ ականալիշ նայեց տանջուած աղքատին, աշխատելով ճանաչել իւր նախկին հուշակաւոր հակառակորդին:

ձիշտ է արդեօք. ի՞նչպէս կարելի է ճշմարտութիւնն իմանալ: Կարծես այս էր մտածում նա հերոսի վրայից աչքերը չը հեռացնելով:

«Եթէ այդ այդպէս է, դու համարձակ ես», ասաց վերջապէս խալիֆան:

— «Ես քո ձեռքումն եմ, մեծայաղթ տէր, հանգիստ պատասխանեց Ջաֆարը, թէեւ եկել եմ քեզ մօտ ոչ թէ իբրեւ թշնամի, այլ անգնն օտարական: Ես ինձ յանձնում եմ քո իշխանութեան, ինչ որ ուզում ես արա, միայն արձակիր եղբօրս: Նա անմեղ է, երբեք քո եւ ոչ մի զինուորին կպած է, խղճացիր նրան: Ո՛հ խալիֆայ, Աստուած չի թողնիլ քեզ նենգութեամբ վերաբերուել իմ խնդրին: Ես ինքս ինձ մատնեցի՝ յուսալով թէ ողորմած ու արդար կը լինիք դէպի իմ եղբայրը»:

Խալիֆան լսում էր նրան՝ յօնքերը կախած: Ջաֆարի համարձակութիւնն ու մեծահոգութիւնը նրան ապշեցրին: Նա մի րոպէ մտածողութեան մէջ ընկաւ, յետոյ բարձրացրեց գլուխը եւ ասաց.

«Աւա, վաղը կը նայենք, իսկ առ ժամանակ կալանաւորեցէք նրան», դարձաւ նա դէպի ծառաները եւ մտաւ պալատի բակը:

Ջաֆարին կապեցին ու բանտ տարին:

թ.

Միւս օրը խալիֆան ուզեց հաստատ համոզուել թէ արդեօք իսկապէս եկող աղքատը նուրեդինի եղբայրն է եւ հրամայեց անսպասելի կերպով նրանց երես երեսի բերել: Միմեանց տեսնելիս եղբայրները գրկախառն ողջունեցին իրար:

Ջաֆա՛ր, Ջաֆար, դո՛ւ էլ այստեղ ես», դառնութեամբ բացականչեց նուրեդինը:

Ջաֆարը չը համարձակուեցաւ ասել եղբօրը թէ ի՞նչն էր բերել նրան այնտեղ, նա ասաց միայն.

«Մեր խելճ հայրը եւ քո կինը սաստիկ կարօտել են քեզ, սիրելի եղբայր»:

Նոյն օրը խալիֆան հրամայեց արձակել նուրեդինին, իսկ Ջաֆարին պահել ամուր գոցի տակ:

Նուրեդինը բանտից դուրս եկաւ օրհնելով երկինքն եւ չը գիտէր ինչի վերաբերել խալիֆայի շնորհը. միայն մայրաքաղաքից անցնելիս երբ ճանապարհի համար ողորմութիւն էր խընդրում՝ լսեց իւր եղբօր անձնանուէր սխրագործութեան պատմութիւնը եւ հասկացաւ թէ ինչ պիտի գնով գնուած է իւր ազատութիւնը: Նա նորից մօտեցաւ բանտի դռան եւ սկսեց հարց ու փորձ անել պահապաններին: Նրանք հաստատեցին այն, ինչ որ լսել էր քաղաքացիներից: Այն ժամանակ սկսեց լաց լինել եւ յուսահատութեամբ կոտրտել ձեռները. դիմեց

բանտապետին եւ աղաչեց, որ խնդրէ խալիֆային իւր վճիռը փոխելու: Նրան պատասխանեցին, թէ խալիֆան կատարում է հօրը տուած խոստումը, որը կտակել էր նրան վրէժխնդր լինել Ջաֆարից, բայց՝ ողորմած խալիֆան՝ յարգելով Ջաֆարի քաջութիւնը, մեծահոգութիւնը, խոստանում է չսպանել իւր երկրի թշնամուն. եթէ միայն չը փորձէ գերութենից փախչել: Խղճահարուելով նուրեդինի անմխիթար վշտից՝ բանտապետը թոյլ տուաւ նրան եղբօրը մնաս բարեաւ ասելու: Այդ վերջին հրաժեշտի ժամանակ նուրեդինը դառնապէս լալիս էր, իսկ Ջաֆարը հանգիստ էր եւ ասաց նրան.

«Գնա խաղաղութեամբ, սիրելի եղբայրս: Ասա հօրս, որ Աստուած ներշնչեց ինձ այսպէս անել: Իմ խիղճը միայն այն ժամանակ կը հանգստանայ, երբ դու վերադառնալովդ մը խիթարես հօրս եւ ընտանիքդ: Հաւատացիր, որ երջանիկ եմ արած գործովս: Աստուած օրհնէ վերադարձդ»:

Պինդ գրկախառնուելով՝ նրանք տուին միմեանց վերջին հրաժեշտ ու անջատուեցան:

Ժ.

Ահա նուրեդինը նորից իւր հայրենի քաղաքումն է, ուր յոյս չունէր այլեւս վերադառնալ: Հալուած ու մաշուած հազիւհազ հասաւ շուկայ եւ այնտեղ ուժասպառ ընկաւ բազմութեան մէջ: Իսկոյն ամենքը ճանաչեցին նրան: Խնդութեան ձայներով ամեն կողմ վազեցին մարդիկ ծերունի Մահմէդ-Ալին գտնելու, որ-

պէս զի յայտնեն նրան այս ուրախ լուրը: Այդ ժամանակ ծերունին նուրեղինի կնոջ ուղեկցութեամբ պատուով էր քաղաքում ողորմութիւն խնդրելու:

Շտապելով որդու առաջ՝ ծերունին ուժով քայլում էր տարիներից թուլացած ոտներով եւ հագիւ հասաւ Ալփահիմայի ետեւից, որ շտապում էր ամուսնուն տեսնել: Սրտաշարժ եւ ուրախ էր նրա տեսութիւնը վերադարձած գերու հետ:

Իմանալով Ջաֆարի արած գործը Մահմէդ-Ալին աչքերը երկինք բարձրացրեց, գոհացաւ Աստուծուց եւ յուզման արտասուքի կաթիլներ աչքերից գլորուեցան:

«Ո՛հ իմ որդիս, Ջաֆարս, ի՛նչպէս կը ցանկանայի սեղմել քեզ իմ կուրծքին: Այժմ, միայն այժմ՝ դու հասար իսկական մեծութեան եւ անմահութեան, դու այդ արիւր մուռնալով քո անձն ուրիշի համար:



գաւառի գաւառի գաւառի
 Կիսայւր 1/2 քաղաքի
 քաղաքի քաղաքի
 քաղաքի քաղաքի
 քաղաքի քաղաքի

10
10 ԿՈՊ.
10 ԿՈՊ.

Խաչ

Համար

187

~~Համար~~

Դ

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

ՀԱՅԿ

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

Հայաստանի Դեմոկրատիկ Հանրապետություն

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1600266

